Իմ առաջին հոգսն եղաւ մեր վրանը կազմել մի յարմար տեղում, որ ուխտաւորները հանգստանան: Մարգարիտը եւ Խաթունը շատ յոգնած էին. նրանք հէնց որ տեղ հասան, դիակի պէս վայր ընկան: Մարօի հպարտութիւնը թոյլ չէր տալիս ցոյց տալ իր յոգնածութիւնը, նա օգնում էր ինձ վրանը կանգնելու միջոցին եւ ծիծաղում էր Մարգարիտի վրայ: Փոքրիկ Սալբին իր աւանակից իջնելուն պէս, վազեց դէպի վանքը, ասելով.

— Եշ գնում եմ աշոաճաճինը տեշնեմ:

Համաձայն Մարօի ցանկութեան, ես վրանը կազմեցի մի երեւելի տեղում: Քառորդ ժամից յետոյ ամէն ինչ սարքուած էր :

Սուրբ Տիրամօր վանքը գտնւում էր Վանայ ծովակի ափին, Լիմ անապատի հանդէպ, Կորդոաց լեռների մէջ: Հայաստանի վանքերից համարեա ամէն մէկը սեփականել է մի առանձին հրաշագործ զօրութիւն, եւ ժողովրդի մէջ հռչակուած է որպէս այս եւ այն բժշկութիւնների մասնագէտ: Կորդոաց երկրի սուրբ Աստուածամայրը նշանաւոր էր որպէս բորոտութեան, քոսոտութեան եւ տեսակ-տեսակ խոցերի բժշկող: Նա ոչ միայն սրբում էր յուսով իր դուռը դիմող ուխտաւորներին յիշեալ ախտերից, այլ բոլորովին առողջ մարգերի մէջ պատճառում էր նոյն ախտերը, եթէ նրանք բարկացնէին իրան, եթէ անհնազանդ կը գտնուէին դէպի իր վանականները, եւ կամ չէին լրացնի նրանց պահանջները: Այս պատճառով, ժողովրդի մէջ բորոտութիւնը, քոսոտութիւնը, մի քանի տեսակ խոցեր եւ կերցաւը՝ կոչւում էին «Տիրամօր եարա», այսինքն՝ Տիրամօր վէրք կամ խոցեր, որոնք յայտնւում են որպէս պատիժ մարդիկների յանցանքի համար աստուածամօր կողմից:

Կորդոաց երկրի Աստուածամայրը խստասիրտ էր եւ վրէժխնդիր: Նրա բարկութիւնը մարդիկներից անցնում էր եւ անասունների վրայ: Ընտանի կենդանիներից ամէն պիսակաւորը համարւում էր նրա վանքին նոիրական, որովհետեւ սուրբ տիրամայրը դրել էր նրա վրայ իր «նշանը»: Տէրն իրաւունք չունէր իր պէտքերի համար գործածել իր կովը, եզը, գոմէշը, ձին եւ այլ չորքոտանին, եթէ նրանց վրայ գտնւում էր «տիրամօր նշանը», որը մի ուրիշ բան չէր, եթէ ոչ մի քանի պիսակներ անասունի մարմնի որեւիցէ տեղում: Նա կամ պէտք է ինքն իր անասունը ուղարկէր վանքը, եւ կամ սպասէր, մինչեւ վանքի «մղդսիքը» գային եւ տանէին: Ամէն տարի վանքի «մղդսիքը» պտտում էին գաւառներում եւ հաւաքում էին այսպիսի անասուններ: Ոչ մի հայ իրաւունք չունէր գնել կամ վաճառել նրանց, որովհետեւ վանքի սեփականութիւն էին:

Վանքի մօտ կար մի գիւղ, որ կոչւում էր «Վանքի գիւղ». նրա բնակիչները բոլորովին ծոյլ եւ տխմար մարդիկ էին, ուրիշ պարապմունք չունէին,